

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳԵՍԲՐԵՐԸ ¹⁾).

(Զրադաշտական պարսիկներ)

I.

VII դարի կիսում մահմեդականութիւնը, շատ ուրիշ հարաւային երկրների հետ, մուտք գործեց և Պարսկաստան: Մօտ 630 թ. Սասանեան Յակեբրտ III թագաւորը, չկարողանալով դիմանալ արաբական թարմ զօրքերի խուժանքին, տեղի տուեց, թողեց երկիրը, հեռացաւ դէպի արևելք. և Պարսկաստանը անցաւ մեծ Խալիֆայ Օմարի իշխանութեան տակ, իսկ պարսիկները հետզ-հետէ ընդունեցին Իսլամը:

Օմարի և Ալիի ու սրանց յաջորդների միմեանց դէմ մղած արիւնահեղ պայքարից յետոյ, մահմեդական Պարսկաստանը ամփոփուեց իր մէջ ընդունելով շիա դաւանանքը:

Չնայելով որ այս նոր կրօնի նշանաբանն էր սրով և հրով տարածուիլը, բայց և այնպէս պարսիկները ամբողջովին մահմեդականութիւնը չընդունեցին, այլ և եղան այնպիսիները, որոնք դիմացան նորածին Իսլամի կոպիտ բռնեցնքներին և իրանց տանջանքների մէջ պարուրած պինդ պահեցին Զենդաւեստան, կրակն ու կրակատունը և Զրադաշտի անունը, ապաւինելով Հնդկաստան կրօնակից Հէնդուների մօտ և կամ բուն հայրենիքում տանջուելով դարեր շարունակ մահմեդական ֆանատիկոսութեան բռցերում:

Ահա հէնց այդ տանջուած նախնիքների աւանդապահ ժառանգներն են, որոնք կոչոււմ են Ֆարսեր, Զարդուշտիներ (Զրադաշտականներ) և կամ Գեարբեր:

¹⁾ Յօդուածս գրելու համար ձեռքի տակ չեմ ունեցել դժբաղդաբար կարեւոր գրաւոր աղբիւրներ, այլ գրել եմ հիմնուելով իմ գեարբերի մէջ ապրած ժամանակամիջոցում ձեռք բերած ծանօթութիւններէս վրայ:

Ներկայումս գեաբրերը տարածւում են Պարսկաստանի հարաւ-արեւելեան մասերում: Ըստ մի վիճակագրութեան, որ տեղի է ունեցել 1897 թուին, գեաբրերի ընդհանուր թիւը Պարսկաստանում 9876 է.¹⁾ որոնցից՝

Թէհրան	- - - - -	300
Եազդ	- - - - -	7000
Քերման	- - - - -	2500
Լիրազ	- - - - -	40
Քաշան	- - - - -	20
Ղում	- - - - -	3
Սպահան	- - - - -	3
Բէնդեր Աբբաս և Բուշիր		10

Ընդամենը 9876 հոգի

Ինչպէս ցոյց է տալիս վիճակագրութիւնը, տեսնում ենք որ գեաբրերը մեծ մասամբ ապրում են Եազդ (7000 հոգի) և Քերման (2500 հ.), իսկ ֆնացած քաղաքներում անշուշտ թիւ են ներկայացնում. ի բաց առեալ մայրաքաղաք Թէհրանը (300 հ.).

Սակայն սխալ կը լինի կարծել, որ ընդհանուր գեաբրերի թիւը 9876 է. պէտք է ասել, որ բացի վերոյիշեալ թուերից, բաւականաչափ զրադաշտական պարսիկներ կան և Հնդկաստանում, որոնք ցրուած են Հնդկաստանի զանազան քաղաքներում. օրինակ. Բոմբէյ, Կալկաթա, Սինդապուր, Մադրաս և այլն. որտեղ պարսպում են զլիաւորապէս առևտուրով. և որոնց ճիշտ թիւը անկարող եղանք որոշիլ միւս զրադաշտականներին:

Փակագծերում ասենք, որ բացի զրադաշտական պարսիկներից կան և զրադաշտական Հնդկուներ. Ամբողջ զրադաշտականների թիւը հաշոււ է Հնդկաստանում 110.000 հոգի, Պարսկաստանում 9876 հ., Լոնդոնում 200 հ., Ամերիկա 25 հ., Եգիպտոս 15 հ., ընդամենը կարելի է հաշուել մօտ 120,000 հ.

Գեաբրերը Պարսկաստանում պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ և մեծ մասամբ ապահով ու շիտակ առևտրականներ են: Սրանք մի տեսակ միջնորդ են հանդիսանում Հնդկաստանից անգլիական (աւստրիական, ֆրանսիական և գերմանական) աղւրանքները, իսկ վերջին ժամանակներս էլ Թէհրանի միջոցով և ռուսական ապրանքները, Պարսկաստան ներմուծելու մէջ. իսկ փոխարէնը. բամբակ, բուրդ, չոր մրգե-

1) Այն թւերը հաղորդել է մեզ Քերմանի դպրոցների աւագ ուսուցիչ Միրզա-Քէյ-Պոսրով-Սիանդարեանը. ծ. հ.

դէն և քաթիրայ 1) են բարձում Բենդէր-Աբբասի վրայով Հնդկաստան կամ ուղղակի Լոնդոն: Պարսկաստանի վաճառականների մէջ, հայ ազգի Թուսանեաններին համահաւասար յարգ ու պատիւ են վայելում զեարրներից Ջիմշիդեանների 2) առևտրական տունը, որոնք իրենց բաժանուները ունին հարաւային Պարսկաստանի շատ տեղերում, ինչպէս օր. Սպահան, Նազդ, Շիրազ, Քիրման, Քաշան ևայլն:

Բացի վաճառականութիւնից, Գեարրերը պարապում են և երկրագործութեամբ: Նազդի և Քիրմանի նահանգներում ունեն իրենց սեպհական գիւղերը և կամ կալուածատէր արաբների մօտ խոշնշին են (կամաւոր նստողներ): Գեարրերը երկրագործ դասակարգ չունին ինչպէս և ամբողջ Պարսկաստանի 1/5-մասը, որ իր սեպհական հողը ունենայ, այլ կան բարձիգարներ (հողագործներ) որոնք կալուածատէր արաբների (աղաների) հողն են մշակում և կեանքի ծանրագոյն բեռան տակ ճնշուած կալուածատէր բոռերին են կերակրում:

Արհեստաւորները շատ աննշան են Գեարրերի մէջ, իսկ դրա փոխարէն ունին բեռնակիրներ (չարուադարներ), որոնք գործում են Քիրմանից—Նազդ—Թէհրան, մասամբ Սպահան, Շիրազ, Բենդէր-Աբբասի ճանապարհներին: Գործում են ուրբանք միայն ջորիներով, ձիերով և էշերով. բայց ոչ ուղտերով:

Շնորհիւ վաճառականութեան Գեարրերը մեծ մասամբ տնտեսապէս ապահով վիճակի մէջ են. սրանց մէջ չկան մուրացկաններ. իսկ եղած չքաւորների համար գործ են ճարում իրենց ցեղակիցները և կամ իրանք են գործ տալիս:

II.

Դարերով արիւնակից, համացեղ և համաբարբառ մուսուլման պարսկից զրադաշտական պարսիկը (նոյնպէս և այլակրօն ցեղերը) զրկանքներ և տանջանքներ շատ են կրել և լ՛ենչեր աւելք, որ մահմեդական պարսիկը չէ հնարել իր այդ նախնիքնե-

1) Ներկայումս Պարսկաստանից արտահանուող նիւթերի մէջ նշանաւոր տեղ է բռնում քաթիրան (tappa). սա մի տեսակ խեժ է, որ ստացւում է փշատերև թփերից: Այս խեժը ստացւում է մեծ մասամբ Քիրմանշահի, Քիւրդստանի, Սոլուշ-Բուլաղի, Սպահանի և Քիրմանի նահանգներից. կայ նոյնպէս և Սէյստանում, բայց անմշակ:

2) Սկանդարեան, Ջիմշիդեան ևայլն անունների եան վերջաւորութիւնը ոչ թէ ազգասիրարար է արուած մեր կողմից, այլ որովհետև Գեարրերի ազգանունները ևս հայկականի նման վերջանում է «եան» մասնիկով:

րի աւանդապահ ժառանգներին իսլամի գիրկը գլորելու համար: Խլել են նրանց հարստութիւնը, յափշտակել նրանց կեանքը, բռնութեամբ հարեմ են տարել կի՛նն ու աղջիկը և այս ոչ թէ պատմութեան մի որոշ շրջանում է տեղի ունեցել, այլ միշտ, մինչև Նասր-էդդին-շահի թագաւորութիւնը: Այդ է պատճառը որ Գեաբըբրի թիւը հալուել, մաշուել է և այդ ողորմելի քանակութեան հասել: Նոյն իսկ այսօր Քերմանում և մանաւանդ Հադ-դում կարելի է հանդիպել բաւականին մուսուլման ընտանիքների, որոնք անցեալ դարի առաջին կիսում բռնութեամբ իսլամն են ընդունել, սակայն նրանցից շատերը մինչև օրս էլ ծածուկ մնացել են զրադաշտական և կատարում են բոլոր ծէսերը, չընայած որ մի սերունդ արդէն անցել է, իսկ շատերն էլ սիրով ընդունել են Բաբի վարդապետութիւնը, իհարկէ դարձեալ ծածուկ:

Սկսած Նասր-էդդին շահի թագաւորութեան առաջին տարիներից, Գեաբըբըր սկսեցին քիչ ազատ շունչ քաշել, չնայած որ դեռ մինչև օրս էլ ազատ չեն մնացել մահմեդական Փանատիկոս հոգևորականութեան և մուկոմանդ ամրոխի կողմից վարմունքները: Նոյն իսկ այժմ Գեաբըբըր (նոյնպէս և հրէաները) եազդում և Քերմանում իրաւունք չունեն քաղաքում հեծնել ձի, էշ և կամ մի այլ գրաստ: Ես տեսայ թէ ինչպէս Քերմանի նահանգում Ռաֆսանջան կոչուած գիւղաքաղքում անգթօրէն ծեծեցին մի հարուստ Գեաբըբի, որ յանդգնել էր քաղաքի մէջ նստել իր սեպհական էշը:

Նասիր-էդդին իր թագաւորութեան վերջին տարիներում, այն է 1890 թ. Ք. (հէջրայի 1308), կայսերական Ֆէրմանով, եազդի և Քերմանի Գեաբըբրից ընտրուած ծերակոյտ (մաշլիսը Ռիշսիֆիդհան) հաստատեց, ամեն մի քաղաքում առանձին բաղկացած 12 հոգի պատուաւոր Գեաբըբրից. այդ ընտրուած մարդիկ մնում են իրենց պաշտօնում ց'մահ, իսկ մեռնելու դէպքում համայնքն է ընտրում նրա տեղը մի ուրիշին, առանց ներկայացնելու պետութեան հաստատութեան: Գեաբըբրի այդ ծերակոյտն է կառավարում իրենց համայնքի ներքին գործերը, նրանք են վերջացնում իրենց մէջ եղած վէճերը, ժառանգական խնդիրները, հոգում են դպրոցների և կրակատների կարիքները. հոգ են տանում որբերի և աղքատների մասին. մի խօսքով սա մի ժողով է, որից կախուած է Գեաբըբրի համայնքի յառաջադիմութեան ու բարօրութեան գործը: Պէտք է ասել, որ այդ ժողովը գեղեցիկ կերպով կառավարում է համայնքը, որի վճիռներին և նոյն իսկ խորհուրդներին ենթարկուում են Գեաբըբըրը առանց տրտուների:

Չնայած արտաքին աննպաստ հանգամանքներին*), որոնցից ճնշւում են Գեաւորերը, բայց և այնպէս նրանք ձգտել և ձգտում են դէպի լուսաւորութիւն ու յառաջադիմութիւն և կարելի է ասել, որ նրանք դպրոցների լարելւածան համար գործ են դնում ամեն ջանք թէ բարոյական և թէ նիւթական: Գեաւորերի դպրոցում դուք չէք գտնիլ ասիական այն կոստութիւնն ու բլթացնող մեթոդը, որ մինչև օրս պահպանւում է մահմեդական մեղրէսէներում: Նրանք չեն խմորում մանուկ սերնդի միտքը ղուրանական ֆանատիզմով, Սադիի, Հաֆիզի, Պայամի սուֆիական միստիկ բանաստեղծութիւններով. սրանով չենք ուզում ասել, որ Գեաւորերը խորշում են այդ մեծ բանաստեղծների երկերից, այլ ընդհակառակը նրանք սիրով կարդում են և անգիր գիտեն ինչպէս և մահմեդականներից շատերը, Հաֆիզի, Սադիի, Պայամի, գինու և գեղեցկուհու վրայ գրած ախորժալուր ոտանաւորները. մանաւանդ Ֆրզուսու «Շահ-նամէ» ն, որից ամբողջ գլուխներ անգիր գիտեն նրանք: «Շահ-նամէ» ն Գեաւորերի ամենից սիրած գիրքն է, որտեղ երգուած է իրենց հերոս նախնիքների դիւցազնական կռիւները: Սակայն այս ամենը անում են նրանք դպրոցից դուրս: Գեաւորերը ուսուցանում են երեսնաներին Հնդկաստանում կազմուած դիւրմբոնների դասագրքերի վրայ:

Գեղեցիկ տպաւորութեամբ է հեռանում այցելուն Գեաւորերի դպրոցից: Այստեղ երեսնաները չեն նստած յետ ու առաջ, աջ ու ձախ, գլխարկներով, ինչպէս մահմեդական մէղրէսէներում. անսովոր բան է թւում Պարսկաստանում, սրանց կարգն ու կանոնը: Սաները բաժանուած են դասարանների ուր առանձին ուսուցիչներ են պարապւում. աշակերտները նստոտած են շարքերով ծալապատիկ առանց գլխարկների. դասարանի պատից կախուած է աշխարհագրութեան մեծ քարտէզը (անգլիէն տառերով) և երկու կիսադնդերի քարտէզը. կան դպրոցական այլ առարկաներ, անկիւնում դրուած է սեղան և աթոռ ուսուցչի համար: Բաւական է այցելել Գեաւորերի դպրոցը, որպէս զի հասկանալ թէ որքան կուտուրա է խեղդել իսլամը և ո՞վ

*) Ուսանելի է ոչ-քրիստոնեայ այս մարդկանց (չին հեթանոս հայերի ազգակիցների և կրօնակիցների) կուտուրական յառաջադիմութիւնը: Թող մեր ճոռոմաբանները որոշ բանակից շարունակեն իրանց բարբառները «քրիստոնեայ հայութեան» երեւի «կուտուրական յատկութիւնների» մասին և կղերական-ազգասիրական էքստազից զոռած յոխորտանքներով աշխարհ զարմացնեն: Թէ այս գլուածքը և թէ Վօլտերի «Կանդիտը» գուցէ մի քիչ սթափեցնեն մեր Պանդուս փիլիսոփաներին և ինքնահաւան շփոխաներին,

գիտէ դեռ ձրբան պիտի խեղդի նա, խեղճ Պարսկաստանումս Հա-
րաւային Պարսկաստանում, Գեաթերերի կրթական գործը հետեւեալ
պատկերն է ներկայացնում. բերենք թուեր; աւելի ¹⁾ պարզ և
որոշ կացուցանելու համար գործի դրութիւնը:

	Դպրոց- ներ	աշակերտ	աշակեր- տուհի	ուսուցիչ	ուսուց- չուհի
Եաղդում	3	290	146	4	1
» Գիւղերում	2	87	??	2	—
Քերմանում	3	175	120	3	1
» Գիւղերում	1	56	??	1	—
Ընդամենը	9	608	266	10	2

Այսպէս ուրեմն, ինչպէս տեսնում ենք, վերևի ցուցակից.
գեաթերերը ունին 9 դպրոց, 12 ուսուցանող, 874 սովորողներով.
որը կազմում է ընդհանուր ազգաբնակչութեան $\frac{1}{10}$ -ը, մական
այս $\frac{1}{10}$ -ը շատ փոքր է համեմատած իրականութեան հետ:
Պարսկաստանում, ոչ թէ միայն գեաթերերի և բարիների, այլ
նոյնիսկ մահմեդական պարսիկների մէջ, խիստ տարածուած է
գրագիտութիւնը, որը մասամբ առանց մեղրեսի երես տեսնե-
լու են սովորում գրել կարդալը զանազան խանութներում ծա-
ռայելու ժամանակ:

Դպրոցներում ուսուցանում են տղաներին հետեւեալ ա-
ռարկաները. 1) պարսկերէն, 2) անգլերէն, 3) ընդհանուր աշ-
խարհագրութիւն և 4) թուաբանութիւն. իսկ աղջկերանց. 1)
պարսկերէն, 2) ընդհանուր աշխարհագրութիւն, 3) թուաբանու-
թիւն, 4) կար ու ձև:

Քաղաքների դպրոցները 5 տարուայ դասընթաց ունին:
Աշակերտներին փոխադրում են դասարանից դասարան առանց
թուանշանների, տարուայ վերջը հրապարակական քննութիւնից
յետոյ: Յառաջադէմ աշակերտները փոխադրւում են ընծաներով,
որը լինում է գրքերով կամ այլ ուսումնական պիտոյքներով,
իսկ ամենայառաջադէմ և լաւ վարքով աշակերտներին վար-
ձատրում են երծաթէ մեդալներով: Այդ մեդալները տրւում են
հոգաբարձութեան (ծերակոյտը պիտի ինկատի ունենալ և ոչ
մի առանձին մարմին) կողմից, աւագ ուսուցչի անունով: Մե-
ղալի մի երեսին պատկերացրած է արեգակը, իսկ միւս երե-
սին կայ հետեւեալ մակադրութիւնը պարսկերէն լեզուով.

1) Եաղդի գպրոցների մասին թուեր հաղորդել են մեզ Պուղամուրադ
Ռոստոմեանը և Շահրիար Արդաշիրեանը, իսկ Քերմանի դպրոցների մա-
սին՝ Միրզա—Քէյ—Պուրսով—Սկանդարեանը:

«Դար զմանը Ֆադի-շահ, Մուզաֆէր-էդդին շահ, ալ Միրզա-Քէյ-Պոսրով բէ շագիրդը» (ի թագաւորութեանն Մուզաֆէր-էդդէն շահի, Միրզա-Քէյ-Պոսրովից իր աշակերտին)։

Դպրոցական գործը առաջ է տարւում բացառապէս Հընդ-կաստանի, մանաւանդ Բոմբէյաբնակ աղագիրցիների նիւթական օժանդակութեամբ։ Բոմբէյաբնակներն են հոգում ուսուցիչները վարձն ու աշակերտների և աշակերտուհիների դասական պիտոյքները։

Նոյն հնդկաստանցիների միջոցներով, այժմ Գերմանում կառուցւում է մի փառաւոր դպրոցական շէնք, քաղաքի հիւսիս արևելեան կողմը գեարբերի Դուլար կոչուած քաղաքամասում։ Այդ շինութիւնը իր փառահեղութեամբ առաջինն է Գերմանում, տաշած քարից և եփած աղիւից, շինութեան համար դրուած է մօտ 10,000 թուման փող. դպրոցը իր ձևով, յարմարութիւններով և ընդարձակութեան կողմից պակաս չէ Նոր-Ջուղայի Քանանեան դպրոցից։ Այդ շինութիւնը պատրաստելուց յետոյ այնտեղ պիտի տեղափոխուեն թէ տղաները և թէ աղջիկները։ Այդ դպրոցի կառուցումն խանգարելու համար շատ աշխատեցին Գերմանի մահմեդական հոգևորականները և չարանախանձ մարդիկ, բայց Թէհրանից եկած խիստ հրամանը փակեց խոչնդոտ հանդիսացողների բերանը և գործը յաջողութեամբ առաջ տարուեց։

Դպրոցական գործի գլուխն է կանգնած Եազդում Զուլան-Մարդը Ֆարսի, որին նոյնպէս և անուանում են Ուստա-Մէստէր. իսկ Գերմանում՝ Միրզա-Քէյ-Պոսրով-Սկանդարեսնը։ Այդ երկու ինտելիգենտ անձնաւորութիւններն են գեարբերի մտաւոր յառաջադիմութեան շարժիչները. որոնցից առաջինը ինքնակրթութեամբ է առաջ գնացել, իսկ երկրորդը իր կըրթութիւնը ստացել է Հնդկաստանի Բոմբէյ քաղաքի անգլիական կոլէջում։ Միրզա-Քէյ-Պոսրովը իր աշխատասիրութեամբ, եռանդով և խոհեմ գործունէութեամբ, ամբողջ հասարակութեան, թէ մահմեդական, թէ բարի և թէ գեարբերի սերն ու յարգանքն է վայելում։ Այս անձնաւորութիւնը հարաւային Պարսկաստանի երոպական կուլտուրայի միակ անկեղծ սերմնացանը կարելի է համարել. սա իր անրիժ գործունէութեամբ ոչ մի նմանութիւն չունի անգլիական հոգիորսող միսիօնարների հետ։ 1904 թուի սեպտեմբերի 12-ին Մուզաֆէր-էդդին շահը վարձատրեց այդ անկեղծ մշակին Եիր-Պուրշիդ շքանշանով. իսկ անգլիական կառավարութիւնը, նոյն թուին, անգլիական լեդուն ուսուցանելու համար՝ երկրորդ կարգի շքանշանով։

Դպրոցական գործից դուրս գեարբերը հոգս են տանում,

իրանց համայնքի առողջապահութեան և հիւանդների հոգատարութեան մասին: Քերմանի գեաբրերը սկսած 1904 թուից վճարում են անգլիական հիւանդանոցին 500 թուման, երկու սենեակ իր մպհճակալներով պահելու հիւանդ գեաբրերի համար, մինը կանանց, միւսը տղամարդկանց համար և այսպիսով դժբաղդութեան օրերում, գեաբրերը կարող են դիմել բժշկին և հիւանդանոցին, առանց սեւի խտրութեան, առանց հարստի և աղքատի տարբերութեան և դեղ դառնել իրենց ցոււերին:

Սակայն այս ամենը Պարսկաստանի միայն հարաւային մասի գեաբրերին է վերաբերում: Բայց թէ ինչ վիճակի մէջ է գտնուում մայրաքաղաք Թէհրանի գեաբր համայնքի գործերը— դժբաղտաբար ոչինչ ասել չենք կարող, որովհետեւ ծանօթ չենք:

III.

Գեաբրները կամ Ֆարսերը, ինչպէս յայտնի է դաւանում են զրադաշտական կրօնը, որպէս և իրենց նախնիքներն էին. այդ մասին մեր պատմագրերից յիշում են. Եղիշեն, Մովսէս Սորենացին և մանաւանդ Եզնիկ Կողբացին, որ յայտնի է իր «Եղծ քեշին պարսից» քննադատական գրութեամբով: Սակայն այս օրուայ զրադաշտականները իրենց վարք ու բարքով, իրենց վերաբերմունքով դէպի օտարները, չեն յիշեցնում մեզ Շապուհների և Յաղկերտների օրը, այն խրոխտ ու հպարտ արքայից արքաներին, որոնք զրադաշտականութիւնից դուրս ոչ մի բան չէին ուզում ճանաչել^{*)}:

Առհասարակ ամեն մի կրօն կամ տոմն մի վարդապետութիւն, ծառայում է իր նպատակներին երբ փոքրամասնութեան սեպհականութիւն է և աղանդաւորութեան շրջանում. սակայն երբ նա սկսում է ճանաչուել, դառնալ մեծամասնութեան դաւանանք՝ չէ ծառայում իր նպատակներին, այդպիսի դէպքերում կրօնը և նոյն իսկ գաղափարները դառնում են մի-մի բեկո. որ մեկում են մարդկային ազատ մտածողութիւնը և կասեցնում մտքի ու հոգու ազատ թռիչքը:

Զրադաշտական կրօնի հիմնադիրը Զրադաշտն, որի անունով և ֆարսերը կոչւում են զրադաշտական կամ ինչպէս իրանք են անուանում իրանց զրադուշտի, իսկ այդ վարդապետութեան հաւատածը և այլ սրբազան պատմութեանքներ և պատուէրներն ամփոփուած է մի գրքի մէջ, որի հեղինակը Զրադաշտ մար-

^{*)} Եթէ առանց քննադատաբար վերաբերուելու հաւատանք մեր վարդապետ-պատմագիրներին...

դարէն է համարուում. այդ սրբազան գիրքը կոչուում է Զէնդ-Աւ-
եստա կամ թէ Զէնդու-Ֆա-դէնդ: Զրադաշտի վարդապետու-
թիւնը կայանում է դուալիզմի մէջ: Այն ամենը ինչը որ բարի
ազնիւ, առաքինի և օգտակար է՝ ստեղծագործութիւն է Որմդ-
դի, որը բարւոյ ներկայացուցիչն է, իսկ այն ամենը ինչ որ
չար է, անազնիւ և ֆրասակար Ահրիմանի ստեղծագործութիւնն
է համարուում, որ չարի ներկայացուցիչն է, սակայն թէ Որմդդ-
դը և թէ Ահրիմանը երկուսն էլ ծնունդ են մի աստծոյ, այն է
Մեծ Ահրումազդայի: Այսպիսով զրադաշտականները դաւանում
են մի Աստուած. այդ իսկ պատճառով կոչուում են նրանք նոյն-
պէս և Մազդեսին, որ նշանակում է Աստուածաճանաչ: Ըստ
Զրադաշտի վարդապետութեան կեանքը ներկայացնում է որ-
պէս մի կոռւի ասպարէզ, ուր մշտական պայքար են մղում Որ-
միդդն ու Ահրիմանը իրանց հպատակ ոգիներով: Սակայն նա
գտնում է որ յաղթանակը պիտի տանէ Որմիդդը՝ բարւոյ ներ-
կայացուցիչը. որովհետեւ ըստ Աւեստայի Ահրումազդանը խոս-
տացել է զրկել երկիր Հոշիդորին, որ պիտի ջնջէ Ահրիմանի
իշխանութիւնը և հաստատէ Որմիդդի մշտաւ թագաւորութիւ-
նը. զրադաշտականները սպասում են Հոշիդորի Գալստեան: (Սա
յիշեցնում է հրէական Մեսեան, քրիստոնէակաների Քրիստոսի
երկրորդ գալուստը և մահմեդականների Մախդին, որին բոլորն
էլ սպասում են): Աստծոյ ներկայացուցիչը երկնքում Արեգակն
է (Աւտար, Սուրշիդ) որ կեանքի աղբիւրն է, իսկ արեգակի
ներկայացուցիչը երկրի վրայ կրակն է (Աթիշ): Զրադաշտական-
ները պարտաւոր են յարուել և նոյնիսկ պաշտել Արեգակը եր-
կնքում իսկ Կրակը երկրում: Կրակը պաշտելու (բայց աւելի
ճիշտը յարգելու) պատճառով կոչուում են նրանք նոյնպէս և
կրակապաշտ (Աթիշ փարաար): Կրակին մշտական յարգանք և
պաշտօն մատուցանելու և սրբազան հուրը անշեջ պահելու հա-
մար, ունեն նրանք կրակատներ ինչպէս և հնում: Ներկայու-
մըս գեաքրերը ունին Եագդում 11 կրակատուն կամ աղօթա-
տուն իսկ Քերմանում 3-ը. այդ կրակատները իրանց լեզուով
կոչուում է Դարբէ-Մէհրիդուն կամ Սունանբը-Մէհրիդուն որ նը-
շանակում է Մէհրի տուն: Կրակատները ունին քառակուսի ձև,
որի արեւելեան կողմը քիչ բարձր է, ուր շինուած է պատի
մօտ մի հնոց, որի շուրջը ազատ է և կարելի է պտտել: Հնոցը
կամ օջախը ծածկուած է թաղով, որի ծխնելոյզը ոլոր-մոլոր
դուրս է հանուած կտուրից որպէսզի սրբազան հուրը պատա-
հական կեղտոտութիւնների չհնթարկուի: Հնոցը որի ճակտին
նկարուած է արեգակի պատկերը ծածկուած է լինում մի վա-
րագոյրով, որ և ըստ մեծի մասին անտեսանելի է մնում հա-

ւատացեալ աղօթաւորներէից. նա մատչելի է միմիայն մովբեղին և կրակատան սպասաւորներին, որոնք սրբազան հուրը պիտի արծարծեն միշտ: Կրակատներում վառնաւ կրակը իրանց լեզուով կոչուում է աթիշ վար ահրամ. այս կրակը անշէջ պահելու համար գործ են ածում փայտ, բայց ներկայումս գործադրուում է և փայտի ածուխը: Կրակատները անմատչելի են օտարներին համար, այնտեղ բացի զրադաշտականներից մուտք գործել չէ կարող ոչ ոք, դա սրբապղծութիւն է համարուում:

Կրակատներում կրակին պաշտօն մատուցանելու և այլ հոգևոր պիտոյքները հոգալու համար, գեաբերը ունին քրմեր ինչպէս և հին ժամանակը: Ծիշտ է, այսօր էլ քրմութեան պաշտօնը ժառանգական է, սակայն այժմուայ քրմերը իրենց պատմական հայրերի պէս մի առանձին կաստայ չեն կազմում, սորա ոչ մի բանով չեն յիշեցնում այն զօրեղ դասակարգը, որ իր շահերի համար արքաներ էր խաղացնում ձեռքին և մղում նրանց կռուի դաշտը յանուն զրադաշտական կրօնի: Այսօրուայ զրադաշտական քուրմը, որին իրենք մովբէզ կամ դասուոր են անուանում, չեն տարբերում իրենց հօտի մի հասարակ անդամից. նոյն իսկ հագուստի ձևով, կամ նիստ ու կացով այնքան նման են իրենց համայնքի մնացած անդամներին, որ անծանօթ օտարականը չի կարող տարբերել քուրմը մնացած գեաբերերից: Քրմերի ցեղից քրմութեան պաշտօն յանձն են առնում նրանք որոնք ցանկանում են, մի խօսքով կամաւոր է և այնքան հոգի որքանի կարիք կայ, իսկ սրանց ապրուստի միջոցները հայթայթում է համայնքը, իր նուէրներով և տուրքերով: Գեաբրիւր բաժանուում են ցեղերի, որոնցից յայտնի են ներկայումս Քէյանի և Սասանեան անուններով, և դրանց մէջ կայ մի փոքրիկ ատելութիւն, ստեղծուած պատմական հողի վրայ. այսպէս Քէյանիները մեղադրում են Սասանեաններին զրադաշտականութիւնը ձեռքից տալու և պարսկական թագաւորութեան սնկման պատճառ դառնալու համար, իրենց գեի կեանքով. իսկ Սասանեանները մեղադրում են Քէյանիներին նրա համար, որ Մանէի պէս մի աղանդաւոր անձնաւորութիւն իրենց ցեղիցն էր ու Մանէի աղանդն են համարում զրադաշտականութեան սնկման պատճառ ու իրանց մէջ երկպառակութիւն գցողը որ և պատճառ դարձաւ հայրենիքի անկման: Այդ ցեղերից ամեն մէկը ներկայումս ունի իր առանձին քուրմը. սակայն այս ատելութիւնը համարեա թէ ջնջուելու վրայ է, շնորհաստանի գեաբերի և Պարսկաստանի գեաբերի մէջ էլ կայ մի փոքրիկ տարբերութիւն, բայց այստեղ խնդիրը կրօնի դոգմային չէ վերաբերում և ոչ էլ պատմական մեղա-

դրանքներ են միմիանց դէմ. այլ լոկ տոմարական տարբերութիւն է, պարզ ասած ժամանակագրութեամբ են իրարից տարբերուում, այսինքն տօն օրերի կատարման ճիշտ ժամանակի որոշելու վերաբերմամբ:

Զրադաշտականները իրանց յարգանքը արտայայտուում են դէպի կրակը ամեն կերպ. օրինակ. նրանք չեն ծխում, այդ համարուում է անպատուութիւն դէպի սրբազան հուրը. չեն փուշում կրակին կամ ճրագին և երբէք ընդի միջոցներով չեն հանգցնում կրակը. զգուշանում են այրել այնպիսի նիւթեր որոնք կարող են անախորժ հոտ ունենալ. սա նոյնպէս մեղք է, այլ ընդհակառակը գործադրում են անուշահոտ խոնկեր և կնտուկներ: Երեկոները ճրագը վառելուց յետոյ դառնում են վառուող ճրագին յարգալից բարեներով, այն է «սալամ չրադ» նոր պարսկերէնով, որ նշանակում է բարե ճրագին: Այս սովորութիւնը նոյնութեամբ պահւում է և մահմեդական պարսիկների մէջ:

Զրադաշտականները աղօթում են օրեկան հինգ անգամ, ճիշտ այնպէս ինչպէս այսօր շիա պարսիկները. այդ աղօթքները տօն օրերին և զոհի ժամանակ բաւական երկար է լինում, սովորական լի օրերից, նրանք աղօթում են ամեն տեղ ուր օտար աչք չէ տեսնում նրանց և այն ժամանակ երբ աղօթատուն չեն գնում: Առաջին աղօթքը կատարում են առաօտեան վաղ արևաճագից առաջ, երկրորդը՝ արեւ քիչ բարձրացած, երրորդը՝ կէսօրին, չորրորդը՝ կէսօրից յետոյ վերջալոյսից առաջ և հինգերորդը՝ երեկոյեան քնելուց առաջ:

Կրակատներում զոհի և պարապմունքի ժամանակ հետեւեալն է տեղի ունենում: Քուրմը հագնում է մի մաքուր, սպիտակ, երկար շապիկ, որին իրենք սատրա են անւանում, գլխին դնում է նոյնպէս սպիտակ մի գլխարկ որի երկու կողմերը կապ կայ, այդ կապերը շիւնում են ականջների վրայով, ծածկում ականջները և կապում ծնոտի տակ, իսկ բերանը նոյնպէս ծածկում է մի ուրիշ կտորով որը կոչւում է Բայդհանա՝ այսինքն լեռանակապ. այնպէս որ զոհաբերութեան ժամանակ քուրմի բերանը ծածկուած պիտի լինի, որպէսզի արարողութեան միջոցին շունչը չ'դպչի կրակին և պղծէ նրան, շապիկի վրայով կապում են 3—4 հանգոյց երկարութեամբ բլրդից գործած մի բարակ գօտի. այս վերջինս պիտի ունենան անպայման բոլոր զրադաշտականները, դա անհրաժէշտ է համարուում աղօթքի ժամանակ: Քուրմը կանգնած է ամենից առաջ, երեսը դէպի արեւելք, ապա նրանից յետոյ աղօթաւոր հաւատացեալները շարք շարք երեսները դարձեալ դէպի արեւ-
Սեպտեմբեր, 1906.

ւելք, և սկսւում է խուլ քրթմնջոց, որ որոշ չափով հրէական աղօթատունն է յիշեցնում, սակայն այստեղ կարգն է տիրապետում. կարդում են աղօթքը, հանելով ծոցներից փոքրիկ աղօթադրքերը, իսկ անգրագէտները մրմնջում են բերանացի. ձայները երբեմն լսելի են լինում և երբեմն էլ իջնում մարում են լուսթեան մէջ, ապա թեթև խոնարհում են գլուխները երկրպագութեան ձևով և նորից ուղիղ կանգնում ու շարունակում մրմնջալ. 10 բուլէաչափ անցնելուց յետոյ և մրմնջում են և աճապարհ իրենց կոճակները և շապկի վրայով կապած այն բրդէ բարակ գօտին որի մասին վերև յիշեցի. արձակում են այդ գօտին և գցում աջ ուսի վրայ կիսմ բռնում աջ ձեռքում և դարձեալ շարունակում մրմնջալ անընդհատ, իրենց այդ երկար աղօթքները: Մոռացայ յիշել որ զոհաբերութեան օրերին մոլորեղի առաջ դրուած է լինում մի մեծ Սկուտեղի, որի մէջ լինում են զանազան մրգեր և պտուղներ, այն ինչ որ ունեն իրենց բերքերից, նոյնպէս և մի գաւաթ օղի, մի գաւաթ գինի, մի գաւաթ ոսկէգոյն խմիչք և մի փունջ էլ հոմի բոյս, վերջինս շատ նման է մեր անանուխին (նանա): Դուրսը վերցնում է իր առաջ դրած հոմի բոյսից մի հատ և բարձր կրկնում մի քանի խօսք. այն ժամանակ աղօթողները բարձրացնում են իրանց աջ ձեռքի ցուցամատը, ապա վերցնում է երկրորդ բոյսը և կրկնում նոյն անհասկանալի բառերը, աղօթողները բարձրացնում են միջամատը և այսպէս կրկնում է մինչև բարձրացնում են նրանց ձեռքի 5 մատները ու նորից ցած են գցում ու շարունակում մրմնջալ. այս կրկնում է երկու անգամ, մէկը յոտնկայս (կանգնած), միւսը ծունկ չոքած. երբ վերջանում է աղօթքը աջ ձեռքը տանում են դէպի ձախ և բութ մատը միացնելով միջամատին խփում են այսպէս ասած չիրթմա ու բարձր կրկնում ճանաչլաթ վար Ահրիման, որ նշանակում է՝ անէծք Ահրիմանին. ապա կապում են բրդէ գօտին մարմնի վրայով, արձակած կոճակներ ամրում, կապում ասիական լայն գօտին ու հեռանում: Չմոռանամ յիշել որ արարողութեան ժամանակ Դուրմի յետևը կանդնած է լինում կրակատան սպասաւորը, որ աղօթելու ժամանակ մի ամանում ծխացող անուշահոտ խոնկն է պտտեցնում աղօթողների շարքերի մէջ. որը շատ նման է լուսաւորչական եկեղեցու խնկարկութեան արարողութեանը:

Աւելնորդ չիմ համարում երկու խօսք էլ ասել զրադաշտականների տօների մասին: Զրադաշտականները ունին տօներ սակայն նրանցից ամենանշանաւորները հետեւեալ երկուսն են միայն:

Առաջինը՝ էյիդը-Հարդորում. այս տօնը որ կատարում են սաւեն տարի օգոստոսի 20-ին մօտաւորապէս, յիշատակն է Զրադաշտ ժառգարէի աղատման, այն փորձութիւնից որին ենթարկուեց նա Հար ոգիներէ ձեռամբ:

Ահրիմանի, հպատակ Հար ոգիները Զրադաշտին գցեցին եօթ կովերի ոտների տակ կոխան լինելու համար. սակայն անասունները Որմզդի հրամանով ոչ թէ չեն ֆնասում նրան, այլ նոյնիսկ անփորձ են պահում և ուրիշ վտանգներից: Այդ օրը ամեն մի զրադաշտական կթում է մի կով ու կաթը ածում ջրի մէջ ձկների համար:

Երկրորդ՝ էյիդը-Մէհրիգէդ—որ նշանակում է տիրոջ օր. սա կատարում է մօտաւորապէս յունուար ամսի 12-ին: Այդ օրը, որ նուիրուած է տիրոջ, բոլոր զրադաշտականները արիւնտ զոհ են մատուցանում: Մորթում են մի-մի ոչխար, իսկ Հունեդոնները հաւ, զոհի արիւնը սրսկում են տան պատերին, իսկ միսը կփում են թոնրով. ապա զոհի արիւնից մի բուռ և եփած միս ուղարկում են կրակատուն, որտեղ քուրմը պտրտեցնում է զոհը կրակարանի շուրջը, իսկ արիւնը սրսկում կրակին և կրակատան պատերին, ու միեւոյն ժամանակը աղօթքներ կարդում վրան. յետոյ նա կտրում է մսից մի կտոր, որպէս տիրոջ կամ նրա ծառայի բաժին, իսկ մնացածը զոհի տէրը յետ է տանում տուն. ուր բաժնում են աղքատներին և բարեկամներին: Համարեա թէ սրանց զոհի ժամանակ նոյն է տեղի ունենում ինչ որ լուսաւորչականների մատաղի ժամանակ:

Զրադաշտականների կամ գեարրերի ամենահետաքրքիր բանը, նրանց մեռեալների ընկալարանն է ներկայառնում, որ կոչւում է դախմէ, որի բառացի նշանակութիւնն է «Լուծեան ամբողջ»: Յիրաւի սա մի ամբողջ է ուր ամենքը լուծեան են դատապարտուած: Այս ամբողջներից ամբողջ Պարսկաստանում գեարրերը ունին 5 հատ. Թէհրան 1, Նազզը իր շրջակայքով 2, Քիւմանը նոյնպէս շրջակայքով 2, Դախմէները շինուած են լինում քաղաքներից դուրս առնուազը 3—4 Փարսաղ յեռաւորութեան վրայ, բարձր լեռների գագաթներին, իսկ եթէ մօտիկ սարեր չկան, այն ժամանակ նա շինուած է նայած յարմարութեան, պատահած բարձր բլուրների գագաթներին: Դա բաւական բարձրութեամբ մի աշտարակ է, որը ունի մի մուտք. իսկ ներսը շինուած է մի խոր ստորերկրեայ արհեստական այր, որտեղ իջնում են սանդուխքներով մինչև յատակը. ահա այդ տեղ են հանգչում զրադաշտական մեռելների ոսկորները:

Զրադաշտականները իրենց մեռելները չեն թաղում հողի մէջ, որովհետեւ ըստ Աւեստայի երկիրը ստեղծուած է 4 տարրերից, այն է՝ հող, ջուր, կրակ և օդ. (զամին, աբ, աթիշ, հաւա) չ'պիտի պղծել և կեղտոտել. հէնց այդ հիման վրայ էլ նրանք իրենց մեռելները չեն յանձնում հողին որպէսզի չ'պղծուի նեխուող մարմնով: Մէկը մեռնելուց յետոյ լուանում են, պատանում ու լուծեան ամբողջ տանում. այնտեղ յանձնում են աշտարակի պահապանին, միակ կենդանի մարդուն, որ մեռեալներին վրայ հոգալու տխուր դերն ունի, վերցնում է դիակը դնում այրից դուրս, աշտարակի ներսը, փայտից, քարից կամ երկաթից շինուած յարմարաւոր նեցուկի վրայ, բաց երկնքի տակը. և այդպէս մնում է նա, այնքան ժամանակ մինչև որ դիակի մկանունները փտութեան են ենթարկւում կամ մեծ մասամբ երկնային թռչունների կերակուր դառնում, հէնց այս վերջին հանգամանքի շնորհիւ է, որ դախմէսների մօտ կարելի է տեսնել միշտ մեծ քանակութեամբ գիշերակեր թռչուններ, որոնք շարունակ ճախրում են լուծեան ամբողջի վրայ և նրա յաւիտեանական լուծիւնը խանգարում իրենց կըռոտցով: Երբ դիակի կմախքն է մնում, մաքրուած մկանուններից, աշտարակի պահապանը հաւաքում է ոսկորները, լցնում նրան պատկանող պատանքի մէջ, բերանը կապում և տանում ձգում այն ստորերկրեայ այրը, ուր լցուած է իրանց նախնիքների աճիւնները: Մեռեալը դախմէ դնելուց 30 օր յետոյ վառում են մի մեծ կրակ մեռելատիրոջ տանը և զոհ են մատուցանում, իսկ եթէ ունեւոր է՝ նրա ունեցածից աղքատներին ողորմութիւն են բաժանում:

Այնտեղ ուր չկայ լուծեան ամբողջ եւ անյարմար է փոխադրել դիակը—դնում են նրանց մօտիկ սարերից մէկի դադաթին և շուրջը քարեր դարսում. օրինակ նոյն ձևով վարուեցին Սպահանի զրադաշտականները երբ իրանց երեք ընկերներից մէկը վախճանուեց Սպահանում: Դիակը դրեցին Զուլայի հարաւային կողմը գտնուած Սուֆու սարի գագաթներից մէկի վրայ:

IV

Գեաւորները հին պարսիկների մնացորդը լինելով, կրում են իրանց վրայ արիական ցեղի ամբողջ կնիքը. նրանք իրանց արտաքինով, իրանց դէմքի գծագրութեամբ, ամենից շատ և աւելի շուտ յիշեցնում են հային, քան թէ արիական ցեղին պատկանող մի այլ ժողովուրդի: Անծանօթ օտարականը և մանաւանդ եւրոպացիները, եթէ առաջին անգամ են լինում հա-

բաւային Պարսկաստանում, հեշտութեամբ են շփոթուում և դարերին հայի տեղ ընդունում. այդ շատ անգամ է պատահել, նոյնիսկ հայ մարդը եթէ ասալին անգամս է այդ կողմերը լինում, նոյն սխալն է անում ինչ որ արևմուտցիք: Գեարքերը բարձրահասակ են մեծ մասամբ, գեղեցիկ դէմքով և նոյնիսկ արծուաքիթ, որ սովոր ենք կարծելու թէ միակ հային է յատուկ: Սե ու խոհուն աչքերը նայում են թախծոտ. չգիտեմ մահմեդականութեան ճշդումն է պատճառը, թէ ցեղական մի յատկութիւն է, որ գեարքերը մեծից սկսած մինչև փոքրը՝ բոլորի ճակատին դրօշմուած է սակաւախօսութեան մի կնիք. որ շատ անբնական է թւում մանաւանդ երեխաների մէջ. դիտողին թւում է, թէ սրանք լուծ են մէկի հրամանով և չպիտի խօսին յաւիտեան, եթէ չխօսացնէք նրանց: Տարբերել սրանց հայերից և մահմեդականներից հեշտ է միայն զգեստներին նայելով, այստեղ արդէն շփոթուելու տեղիք չ'կայ. քանի որ մուսուլման իսլամը նրանց համար յատուկ տարազ է որոշել, որից հետո գնալ անկարող են նրանք (թէհրանը որպէս մայրաքաղաք այնտեղի բնակիչ գեարքերը բացառիկ պայմաններում են գտնուում զգեստների և նիստ ու կացի վերաբերմամբ): Գեարքերը հագնում են մահմեդական պարսկի նման երկար լարադա (կապայ-վերնազգեստ), սակայն մեծ մասամբ մոխրագոյն կտորից, իսկ վարտիկները պիտի լինին սպիտակ, սևը հագնելու իրաւունք չունին, իսկ գլխներին փաթաթում են մոխրագոյն կամ շագանակագոյն փաթոյթ (ամամա չալմա). սրանք չեն հագնում արա կոշուած պարսկական վերարկուն: Շորերի այս ձևից կարելի է ճանաչել գեարք տղամարդկանց: Գեարք տղամարդկանց շորերից սպիտակ շապկի վրայով հագնուող արխալուխը կարծէք փոխանցել է դարաբաղցի կնոջ երեք փեշկանի արխալուղին, որը իր ձևով նոյն է առանց փոփոխութեան. ինչ որ գեարքերի արխալուղն է:

Տարօրինակ է թւում տեսնողին և միանգամայն զարմանալի գեարք կնոջ դիրքը ամբողջ մօտիկ արեւելքի կանանց մէջ: Այն կրօնը որ իսլամ է կոչւում և որը իր կապարի պէս ճշդ ծանրութեամբ խնդրել է իր հաւատացեալ կնոջ մէջ ազատ ոգին ու իր կրքոտ ու խանդոտ հայացքների տակ ստիպել է կանանց փաթաթուել զանազան սաւանների (չադրա) և լայն վարդիկների (փայթավա) մէջ, իր կոպիտ և վատ ազդեցութիւնն տարածել է շրջապատող և հպատակ այլակրօնների (մուսթի—էլ—իսլամ) վրայ, ինչպէս օրինակ հրէաների և քրիստոնեաների վրայ:

Այսպէս մահմեդական երկրներում ապրող հրէուհիները

հազնուում են այն ձևով, ինչ ձևով որ մահմեդական կանայք են հազնուում. օրինակ Պարսկաստանում բնակողները՝ պարսկուհու ձևով, իսկ կենտրոնական Ասիայում հազնուում են սարթուհիների նման և այլն. նոյնպէս և հայ կանայք ենթարկուել են իսլամ կանանց ազդեցութեան: Մինչև օրս էլ Նոր-Ջուղայում և Թէհրանում հայուհիները շրջում են չաղրաներով, նոյնիսկ Նոր-Ջուղայի ազգային դպրոցի վարժուհիներից շատերը այդպէս են վարւում. ի՞նչու հեռուն գնալ. կովկասում շամախցի հայ կնոջ զգեստները նոյն մահմեդական կնոջ զգեստն է անշնչան փոփոխութեամբ. իսկ խեղճ դարարադցի կանանց շորերը և մանաւանդ նրանց զանազան քնթակալերն ու կանգունաչափ բարձրութեամբ պալիներից յաւիտենական լալկանութիւնն է խօսում, որոնց մէջ փաթաթում են նրանք իրանց սիրուն դէմքը ու այլանդակում իսկական գեղեցկութիւնը. այս բոլորը մեր կարծիքով արուած է իսլամի կրքոտ հայացքից գեղեցկութիւնը փախցնելու, և մանաւանդ որ իսլամը բաց երեսով կին չէ ուզում տեսնել: (Սաշնարած և վրանաբնակ իսլամ ցեղերը, գտնուելով բոլորովին այլ պայմաններում, քան նստակեացները, չեն ենթարկուել իսլամի այդ պահանջին):

Սակայն գեաբը կինը բոլորովին հակառակն է դրանց. ասում եմ տարօրինակ է թւում, երբ մարդ մի մահմեդական երկրում բաց երեսով շրջող արեւելցի կին է տեսնում. և դա գեաբը կինն է: Բազմամբոխ շուկայում, մութ չարսուների տակ, խուլ փողոցներում, ազատ դաշտերում, մի խօսքով ամենուրեք, նա շրջում է բաց, առանց չաղրայի և առանց երեսը ծածկելու շրջապատող հայեացքներից. և նայում է նա բոլորի վրայ ոչ վարագոյրի տակից, այլ բաց երեսով, իր սև ու հեղ աչքերով: Ո՛րքան քաջութիւն և հոգեկան արիւթիւն է հարկաւոր մի իսլամ երկրում ինքնուրոյնութիւնը պահպանելու համար և նա գեաբը կինը, ոչ մի կերպ չէ ենթարկուել մահմեդական կնոջ օրէնքներին: Գեաբը կինը չէ փախչում օտարականից և ոչ էլ հարազատից. նա խօսում է ամենքի հետ նոյն ձևով պարզ ու բաց երեսով: Տարօրինակ է մանաւանդ սրանց զգեստների ձևը որ հետևեալն է:

Գլխներին կապում են մի եռանկիւն թաշկինակ, որը դա՛սթից ծածկում է դլխի յետւի մասը ու տըտները անց են կացնում ծնոտի տակով և կապում ծոծրակի վրայ. դրա վրայ կապում են երկրորդ թաշկինակը—ճակատից դասթի վրայով անց են կացնում ու կապում ծոծրակի վրայ դարձեալ և ուրիշ ոչինչ, իսկ ձմեռ ժամանակ գործ են ածում ձմեռուայ շալ. որ մեծ մասամբ Նազդի դործուածք է լինում. սրանք բոլորովին

միապաղաղ գոյնով, կամ մի կտորից կարած շապիկ չեն հագնում. սրանց շապիկը կարուած է համարեա թէ ամեն գոյնի կտորների միացումից որ ներկայացնում է մի տարօրինակ ու խայտաճամուկ բողբալ, որը նայողի աչքերն է խտտղեցնում. այս դարմանալի գոյների միացումից կարած շապիկը իջնում է մինչև ծնկները և շատ անգամ էլ ծնկներին չէ հասնում. իսկ սրանց վարտիքը մի տեսակ ուռած պարկի է նման, որը իջնում է մինչև սրունքները և այնտեղ կապւում կամ ազատ արձակւում: Շորերի այս դարմանալի տարազին ես հանդիպել եմ մահմեդականներից միմիայն ազատութեան սիրահար, ազատ Բախտիարցիների և Լօսերի մէջ, Բախտիարների երկրում, սակայն ոչ այնպէս խայտաճամուկ գոյներով, այլ միապաղաղ սև, կամ սև ու կարմիր գոյներով:

Գեարբերը, բացի մահմեդականներից, ոչ մի օտարականից չեն խորշում, իսկ մի առանձին սէր են ցոյց տալիս նրանք դէպի հայերը որոնց մօտ իրենց աւելի ազատ և լաւ են զգում քան ուրիշների:

Գեարբերի ընտանեկան կեանքը խաղաղ է անցնում. սրանք մահմեդականների պէս բազմակնութիւն չունին, ընդհանրապէս պահւում է նրանց մօտ միակնութեան ձևը, չնայած որ զրադաշտական օրէնքը թոյլատրում է ունենալ երկրորդ կին ևս, եթէ առաջինը ամուլ է. սակայն կարելի է ասել, որ երկու կին ունեցող գեարբ հազիւ թէ ճարուի Պարսկաստանում, իսկ ապահարդանը օրէնքով չէ ընդունւում: Կինը այստեղ այնպէս չէ ճնշւած, ինչպէս մահմեդականների մօտ. նա ընտանիքի անդամն է իր լիակատար իրաւունքներով և իր ամուսնու ընկերը իր տան տնտեսութեան մէջ. սրանց ընտանիքը և կինը շատ են յիշեցնում հայ գիւղացուն և հայ կինը իր ընտանիքով:

Վերջացնելով մեր խօսքը գեարբերի ներկայ դրութեան մասին, երկու խօսք էլ ասենք նրանց ապագայի վերաբերմամբ: Այն ինչ որ չէ կարողացել անել իսլամը բռնութեամբ ու կռիւտ ոյժի միջոցով, այն որ չէ կարողացել իր բարոյական ոյժով միացնել զրադաշտականութեան այս մի բուռը հետևողներին իրա հետ (ասենք իսլամը բարոյական ոյժից էլ զուրկ է). այդ անում է այսօր բարեիականութիւնը իր սիրով ու մարդասիրական դադափարներով, այն ինչ որ չէ կարողացել համոզել բռնութիւնը, այսօր գրաւում ու դէպի իրան է քաշում իր շուրջը հաւաքում այս ամենահին կրօնի հետևողներին բարիների մարտիրոսութիւնն ու տանջանքը: Ես ճանաչում եմ թէ Քերմանում և թէ Խազդում բաւականաչափ գեարբերի, որոնք թէև ծածուկ, բայց սիրով հետևում են Բաբի

վարդապետութեան (աւելի ճիշտը Բանայի վարդապետութեան) և երբ ազատ քաղաքացիական իրաւունք ստանայ բարիականութիւնը Պարսկաստանում, այն ժամանակ հաւանական է որ գեաբրերի մեծագոյն մասը պիտի հետևի այդ նոր կրօնին. որովհետև նրանց ամենակրթուած տարրն անգամ հակուած է դէպի այդ նոր կրօնը:

Վերջացնելով իմ այս փոքրիկ յօդուածը գեաբրերի մասին, մեր ազգագրագէտները ու մեր հին պատմութիւնը ուսումնասիրողները ուշադրութիւնն եւ հրաւիրում Ասիայի այս հին ու փառաւոր ազգի փոքրիկ մնացորդների վրայ. այն ազգի որի ազգեցութիւնը անցեալում անպայման եղել է մեզ վրայ շատ մեծ. որի հետ մեր անցեալ կեանքն ու պատմութիւնն է շաղկապուած եղել մինչև այն ու օրերը, երբ թագն ու պալատը փոխանակեցինք քուրճի ու ճգնարանների, իսկ սուրը՝ խաչերի ու այդպէս դարերի հաժրաքալ ընթացքում ճնշուած ծանրութեամբ մեռանք տանջուեցինք և մինչև օրս, որովհետև երբիստոնայ եղանք, բաժանուեցանք մեզ կրօնակից և ցեղակից պարսերից: Այստեղ մեր ազգագրագէտները շատ բան կը գտնեն մեր անցեալից, մեր անփառունակ կորած, քրիստոնէութեան զոհ դարձած անցեալից:

Սար—Յով.

ՔՆՆԵԳԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏՆԵԼԽՕՍՈՒԹԻՒՆ

Գր. Վանցեան՝ պատմական բնականութիւն արեւելեան հայոց լեզուի
Թիֆլիս, 1906, դ. 75 կ.

Մեր այն ուսուցիչները, որոնք ուզում են հայոց քերականութիւն աւանդելիս ունենալ պատմական—փիլիսոփայական որոշ նախապատրաստութիւն մեր նոր լեզուի մասին—մեծ օգուտ կը ստանան պ. Գր. Վանցեանի այս աշխատութիւնը: